

*ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՒՄԵՐՏ ԴՈՒԿԱՍՅԱՆԻ ՌԻԴԵՐՁԸ
ԲԱՆԱԿԻ ՕՐԿԱ ԿԱՂԱԿՑՈՒԹՅԱՄԲ*

28.01.2024



Միբելի՝ հայրենակիցներ

Այսօր նշում ենք մեր ազգային ինքնիշխանության ու պետականության ամենակարևոր խորհրդանիշ Հայոց բանակի տոնը, որը կազմավորվեց 32 տարի առաջ:

Կազմավորվեց ժամանակի հրամայականով ու դժվարին ժամանակաշրջանում, երբ պայքարում էինք հայրենիքի լինելության համար. կազմավորվեց սկզբում կամավորականներից, անկախ Հայաստանի առաջին նորակոչիկներից՝ միաժամանակ թրծվելով ռազմական գործողություններում և աստիճանաբար դառնալով արհեստավարժ բանակ: Գրեթե բոլոր հայ ընտանիքներում կան անձինք, որ ամենադժվարին ժամանակներում պաշտպանել են հայրենիքը:

Միբելի՝ զինվորներ ու սպաներ, մեր բոլոր պատերազմների մասնակիցներ ու վետերաններ, շնորհավորում եմ բոլորիս Հունվարի 28-ի կապակցությամբ:

Հայրենիքի պաշտպանության այսօրվա բոլոր նվիրյալներին մաղթում եմ ամուր ռզի ու անփորձանք ծառայություն, մեր հայրենիքին՝ խաղաղություն և բարեկեցություն, բազում մարտահրավերներին դիմակայելու ուժ և հմտություն:

Մեր խոնարհումը՝ ՀՀ զինված ուժերի կազմավորման ակունքներում կանգնած հերոսներին, նրա կայացման, հաղթանակներ կերտելու մեջ ներդրում ունեցողներին, հավե՛րժ փառք այդ ճանապարհին ու մինչ մեր օրեր Հայոց բանակի շարքերում անմահացած հայորդիներին: Շնորհակալությո՛ւն մեր կողքին ապրող՝ մեր բանակի տարբեր սերունդների լեգենդար անուններին, որոնք օրինակ են այսօրվա ծառայողների համար: Իմ երախտագիտությունը բոլորիդ՝ հայրենիքին մատուցած ձեր քաջարի ծառայության համար:

Հիմա դժվարին խնդիրների լուծման, բարեփոխումների ու ժամանակի հետ համահունչ քայլելու շրջան է նաև մեր բանակի համար, այս ամենին զուգահեռ սակայն, ամենից կարևորը հայ մարտիկի ռզին է, որին հավատում ենք բոլորս: Հպարտանա՛նք նրանցով, ովքեր այժմ արժանապատվորեն կատարում են իրենց ծառայելու պարտքը՝ խիզախորեն և անձնուրաց պաշտպանելով հայրենիքը:

Փաստենք, որ անհիշելի ժամանակներից երկրների ազատությունն ու անկախությունը հենվել են մարմնով և հոգով ուժեղ մարդկանց ուսերին, որ պատրաստ են տեր կանգնել իրենց ընտանիքին և հայրենիքին: Ուստի ամենքս մեր տեղում, նախևառաջ, պետք է նեցուկ լինենք Հայոց բանակին՝ աշխատենք հանուն մեր երկրի տնտեսության զարգացման, պետական ինստիտուտների ամրացման, պետականության հզորացման, որոնք էլ ուժեղ բանակի հիմքն են:

Շնորհավո՛ր տոնդ, Հայո՛ց բանակ: